



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՆՎԻՐՎԱՇ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Երկրագնդի ողջ մարդկությանը մտահոգող ամենակարևոր հարցն այսօր ուղիների որոնումն է՝ մարդկությունն ու ողջ երկիր մոլորակը ազտեղու հնարավոր չարաշետ պատերազմից, որը կարող է կործանել Աստվածային հրաշալիքներով լի այս երկիրը։ Խաղաղության պահպանման համար մեր օրերում աշխարհի տարբեր երկրներում տեղի են ունենում բանակցություններ, համաժողովներ, ցույցեր և այլն։ Այսպիսի մի միջոցառում էր նաև սույն թվականի փետրվարի 14—16 օրերին Մոսկվայում կայացած համաժողովը, որին իր մասնակցությունը բերեց նաև Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի։

Այս առթիվ մարտի 4-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամերգությունից հետո, լեփ-լեցուն էր Վեհարանի հանդիսությունների դահլիճը։ Վերոհիշյալ խաղաղության համաժողովի ընթացքին ու որոշումներին ավելի ամբողջական կերպով ծանոթանալու համար Մայր Աթոռ էին հրավիրվել Արարատյան Հայրապետական թեմի հոգևորականները, Վրաստանի ու Ադրբեյջանի առաջնորդ սրբազն հայրերը, Եկեղեցական խորհուրդների նախագահներ։ Հավաքին մերկա էր նաև ուստավորաբար Մայր Աթոռում գտնվող Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպոս։ Չինչինյանը։

Հավաքի բացման խոսքով հանդես եկավ Մայր տաճարի լուսարարակետ գերաշնորհ Տ. Հովհաննես Առքեպոս։ Մանթուրյանը։

ԳԵՐԱԾՆՈՐԾ Տ. ՀՈՒՍԻԿ ԱՐՁԵՊՍ. ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր, արժանապատիվ հայրեր, սիրելի սաներ և Շերկաներ։

Մեզ բոլորին հայտնի է, որ անցնող ամսի 14—16-ը, երեք օրերի ընթաց-

քում, Մուկվայում տեղի ունեցավ մի մեծ համաժողով՝ ֆորում, որին մաս-
նակցեցին ավելի քան հազար ներկայացուցիչներ ինչպես Սովետական
Միության, այնպես էլ արտասահմանյան զանազան երկրներից: Այդ հա-
մաժողովում ճառով հանդես եկավ մեր պետության ղեկավարը՝ Միխայիլ
Գորբաչովը, որի բովանդակալից ու խաղաղահրական ճառը մեծ արձա-
գանք գտավ և մեր երկրում, և արտասահմանում: Համաժողովի նախատակն
էր աշխարհը միջուկազերծ դարձնել և ապահովել մարդկային կյանքի հա-
րատնույթունը երկրի վրա: Ուրախությամբ պիտի ասեմ, որ այս անգամ ևս
այդ պատմական մեծ ժողովին Հայոց Սովետական Եկեղեցին ներկայաց-
րեց Ամենայն Հայոց Վազգեն Սուածին Հայրապետը, իրեն ուղեկիցներ ու-
նենալով շորու եպիսկոպոսները. Տիրապը արքեպոս. Մարտինիան՝ Ռումինիա-
յի թեմի առաջնորդ, Գյուտ եպոս. Նազգաշյան՝ Փարիզի թեմի առաջնորդ,
Վազգեն եպոս. Քեշիշյան՝ Կանադայի թեմի առաջնորդ, ինչպես նաև Անա-
նիա սրբազնը՝ Աղրբեջանի թեմի առաջնորդ, որ որպես թարգման
ուղեկցում էր Վեհափառին այդ համաժողովում:

Վեհափառ Հայրապետն իր գահակալության ավելի քան երեսում տա-
րիների ընթացքում բազմաթիվ անգամներ եղել է միջազգային, միջենե-
ղացական, համամիութենական խաղաղության նվիրված համաժողովների և
իր խորս ասել: Այս անգամ ևս Վեհափառ Հայրապետն այդ պատվավոր
ֆորումում իր ձայնը լսելի դարձրեց՝ հանուն աշխարհի խաղաղության, հա-
նուն զինաթափման, հանուն պետությունների փոխըմբռնման և շինարար
գործակցության: Այս փաստը մի անգամ ևս ցուց է տալիս, որ Հայաստան-
յաց Սովետական Սուրբ Եկեղեցին, գլխավորությամբ Վեհափառ Հայրա-
պետի, կանգնած է խաղաղահրական ուժերի դիրքերում: Անշուշտ այդ
համաժողովում այլ անձինք ևս խոր առին. քաղաքական գործիչներ, հոգե-
վորականներ, մտավորականներ, որոնց հայացքների մեջ մի ընդհանրու-
թյուն կար՝ դա աշխարհը միջուկազերծ պահելն է և երկրի վրա մարդկա-
յին կյանքը ապահովելը, որպեսզի մարդիկ այս մոլորակի վրա ապրեն խա-
ղաղ ու երջանիկ: Այս մտահոգությունը, անհանգստությունը ցուցաբերեցին
բոլոր՝ անկախ իրենց տարբեր աշխարհայացքներից:

Պետք է նկատել, որ միայն երկրորդ համաշխարհային պատերազմում
մարդկությունը շուրջ հիսուն միլիոն զոհ տվեց: Խսկ եթե, Աստված մի
արացե, երրորդ համաշխարհային պատերազմը տեղի ունենա, մարդկային
կորուստները շատ ավելին պիտի լինեն: Նույնիսկ այն կարծիքը կա, թե
կյանքի վերացում կարող է տեղի ունենալ մեր մոլորակի վրա: Անա թե
ինչու բոլոր խաղաղամեր ուժերը այսօր միասին աշխատանք են տանում,
որ նման պատերազմ տեղի չունենա: Ես այս առիթով ուզում եմ խոր
շնորհակալություն հայտնել մեր կառավարությանը, Միութենական կառա-
վարությանը, որն անշենորեն խաղաղահրական քաղաքականություն է
վարում: Դուք բոլորդ գիտեք, որ մի քանի օրեր առաջ Միխայիլ Գորբա-
չովը հանդես եկավ նոր առաջարկությամբ՝ եվրոպայում գտնվող միջուկա-
յին կայանները վերացնել: Սա ևս մի փաստ է, որ մեր կառավարությունը
մեծ աշխատանք է տանում, որպեսզի մեր մոլորակի մժնողորտը առողջաց-
վի, և որ սպառազինությունների մրցավագքը ատիճանաբար դաշտակց-
վի և վերացվի: Մենք այս առիթով, անշուշտ, մեր խորին շնորհակալու-
թյունը պիտի հայտնենք մեր կառավարությանը, մենք՝ հատկապես Մայր
Աթոռի միաբաններս, բոլոր հոգևորականներս, որովհետև մեր առա-

քելությունն իսկ դա է՝ խաղաղություն քարոզել, խաղաղություն կամենալ աշխարհին:

Ապա խոսք առավ Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Անանիա Եպս. Արարաջյանը և ներկաներին մանրամասնորեն պատմեց Փորումի աշխատանքների մասին (տես էջ 18):

Հավաքը եզրափակվեց Վեհափառ Հայրապետի հետևյալ խոսքով.

ՎԵՀԱՓՍՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԻՆ

Մեծ գոհունակությամբ ողջունում եմ ձեր բոլորի ներկայությունը այս տեղ: Քիչ առիթներ ունենում եմ այսպես համախումք տեսնելու ձեզ, որի համար իմ ուրախությունն եմ հայտնում: Եվ, վստահ եղեք, ես միշտ պիտի ոգեի, որ նաև այլ առիթներով պատեղ հավաքվեք՝ դոք մեզ լսելու, մենք էլ ձեզ լսելու համար:

Նաև իմ գոհունակությունը կուգեն հայտնել Անանիա սրբազնին, այսօրվա ամփոփ, բովանդակալից գեկուցման համար, որով հստակ կերպով ներկայացրեց Մուկվայի Փորումի գործունեության պատկերը:

Դոք բոլորդ Սուրբ Գիրք քիչ-շատ իմանում եք: Հին Կոտակարանում հշանավոր պատմվածքը կա Հուդիթի և Հողովիեռնեսի մասին: Հրեա ժողովուրդը մեր ազգին բախտակից եղած է, տակավին հնագույն ժամանակներից: Հրեա ժողովուրդը շատ անգամ հարձակումների ենթարկված է և կոտորված: Մեր թվագրությունից առաջ, Ասորեստանի բռնակալներից զորավար Հողովիեռնեսը մեծ բանակով հարձակվեց Հրեաստանի վրա: Հրեաները ահարկու վտանգի մեջ էին, փորձում էին դիմադրել, սակայն նրանց կացությունը մնում էր ողբերգական: Ահա այդ ճակատագրական պահին, հրեա ժողովուրդի ծոցից ծնած գեղեցիկ և քաջարի մի կին՝ Հողովի անունով, մի հնարքի դիմեց՝ ներկայանալ Հողովիեռնեսին, իբրև նրա կողմնակից, հրապարի նրան իր կանացի գեղեցկությամբ, և ապա նրան սպանի: Եվ այդպես էլ արեց, նրա գոլույր կտրեց գիշերը, խնջութից հետո: Թշնամի զորքը լսելով իրենց զորավարի գլխատման մասին, կովի դաշտը թողնում ու փախչում է: Հրեաները այսպիսով ազատվում են բնաշնչումից: Այս թեմայի վրա ֆրանսիացի մի դրամատորք, մի թատերգություն է գրած, որը ես տեսել եմ Բուխարեստում պատերազմից առաջ: Ներկայացումի ընթացքին հաղթական Հողովիեռնեսը գոռող հոգեբանությամբ, իբրև գերազուն ինքնազնահատանք, բացականչում է. «Ես ավերակների ճարտարապետ եմ»: Դժբախտաբար, պատմության ընթացքում բազում Հողովիեռնեսներ, բազում ավերակների ճարտարապետներ են եղել: Հենց մեր ազգային պատմությունը բազում վկայություններ ունի՝ Վարդանանց շրջանից մինչև գրեթե մեր օրերը, հատկապես 1915 թվականին, երբ Թավեաթ փաշան էլ նոյն գոռողությամբ պիտի բացականչեր, թե ինքն էլ ավերակների ճարտարապետ է: Այն, նա էլ ավերեց ամբողջ մի երկիր: Երկրորդ համաշխարհային պատերազմին ո՞վ էր Հիտլերը, եթե ոչ մի ահազոր Հողովիեռնես, որ այս անգամ գրեթե ամբողջ Եվրոպան, Գերմանիան էլ մեջը լինելով, ավերակի վերածեց, հիսուն միլիոն մարդկային գոհերով:

Ես աղմտեղ՝ ֆորումի այդ համագումարին, լսկով մասնակից մարդկանց խաղաղասիրական արտահայտությունները, մարդիկ՝ եկած աշխարհի տարբեր երկրներից՝ հոգևորականներ, գրողներ, արվեստագետներ, հասարակական գործիչներ, տեսա, թէ ինչքա՞ն մարդասիրական ոգի էր տիրում: Այդ մարդասիրական, խաղաղասիրական ոգին տիրապետում էր այդ տեղապես ֆորումի ենթացքին: Այդպիսի մթնոլորտի մեջ մարդիկ մտածում էին դառնալ ոչ թէ ավերակների ճարտարապետներ, այլ՝ նոր, խաղաղ և արդար մի աշխարհ կառուցող ճարտարապետներ: Մենք, իբրև հոգևորականներ, մաղլում ենք, որ այդ ոգին հաղթանակի: Մենք, իբրև հայեր, մեր անցյալի ողբերգական փորձառություններով, մի գուցե ավելի քան ուրիշներ, երազանքը ունենք մի խաղաղ ու անվտանգ աշխարհի կառուցման, որովհետև մենք՝ հայերս, տակավին չբոժված վերքեր ունենք:

Խաղաղություն ամենեցուն, ամեն:

Խաղաղության համաժողովին նվիրված հավաքն ավարտվեց խմբովին արտասանված Տերունական աղոթքով:

